

ԱԶՈՐԴԱՅՓՈՐ ԳԱՎԱՌԻ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ՇՈՒՐՁ¹

Արկադի Ակոպով, Դավիթ Նահատակյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ *Տայք, Թորթում, Ճորոխ, Ագորդ, հուշարձան, Օշկ, եկեղեցի, ամրոց, բնակավայր, հայեր:*

Սույն հոդվածի շրջանակներում առանձին ուսումնասիրության առարկա են դարձել պատմական Մեծ Հայքի Տայք աշխարհի Ագորդացիոր գավառի պատմաճարտարապետական հուշարձանների տեղագրության և արդի վիճակի վերաբերյալ հարցերը: Զուգահեռ ներկայացվում են ժողովրդագրական տվյալներ, որոնք ընդգրկում են XIX դարից մինչև Հայոց Մեծ եղեռն ընկած ժամանակաշրջանը:

Նախաբան. Աշխատության նպատակը մեր կողմից իրականացված ոչ ամբողջական այցերի հետևանքով ստացված նյութերի, աղբյուրագիտական, պատմամատենագրական և ճարտարապետական հետազոտությունների արդյունքների համատեղումն է, որը պետք է հիմք հանդիսանա առաջիկա դաշտային աշխատանքների համար:

Տայքի կենտրոնական Ագորդացիոր գավառը տեղագրվում է Թորթում գետի ստորին հոսանքի շրջանում և Թորթումի լճի շրջակայքում: Հյուսիսից այն սահմանակից էր Ճակք գավառին, որից բաժանվում էր Օլթի գետով, արևմուտքից Արսեացիոր գավառից բաժանված էր Ճորոխի աջափնյա ջրբաժան լեռներով, հարավ-արևմուտքից սահմանակից էր Ոքաղեին, որից բաժանվում էր Օղիկ գետակի ձորահովտով մինչև

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-2A292 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Մամրվանի վարչական սահմանը², իսկ հարավ-արևելքից և արևելքից՝ Բողխա գավառին, որից բաժանված էր Թորթում և Օլթի գետերի ջրբաժան լեռներով:

Ազորդացփոր գավառի կենտրոնն էր Ազորդ բնակավայրը. «Ազորդ գետը նշանակեց զլխաուր տեղի Ազորդափոր գաւառի Տայոց»³: Օսմանյան տիրապետության շրջանում Տայքի Ոքաղե և Ազորդացփոր գավառների տարածքում ձևավորվում է նոր վարչամիավոր՝ Թորթումի սանջակը նույնանուն կենտրոնով, որն ընդգրկվում է Էրզրումի նահանգի մեջ:

Ազորդացփոր գավառի բնակավայրերի տեղանունները միջնադարում գավառի գրեթե համատարած հայաբնակ լինելու լավագույն առիավատյան են: XVII դարում մեկնարկած բռնի մահմեդականացումը էապես փոխեց գավառի էթնոկրոնական դիմագիծը: Բռնություններից ազատվելու համար քրիստոնյաների մի հատվածը նախընտրեց ընդունել մահմեդականություն, չնայած նրանցից շատերը շարունակում էին պահպանել քրիստոնեական որոշ սովորույթներ և մայրենի լեզուն: «Երկիրս մէկ ծայրէն միւս ծայրը հայ նկարագիրը պահած է անով որ բոլոր անուանք մնացած են հայերէն, ոչ միայն մահմետականացած գիւղերուն, այլ անոնց անթիւ մանրամասնութիւնք ալ՝ անուանք գիւղամասերու կամ թաղերու, լեռանց, գետոց ու առուակաց, արտերու... Լեզուի կողմանէ ի հարկէ օտար ուղեւորի մ'առաջին տպաւորութիւնն այն կ'ըլլայ թէ մեծ մասն այլեւս թրքախօս եղած է: Բայց նախ նկատելի է որ հայ մահմետականը ստիպուած էր եւ է մանաւանդ Համիտական շրջանէն ի վեր՝ խորշիկ հայութեան արտաքին երեւոյթներէն իսկ, չհալածուելու համար»⁴, - գրում էր Հ. Տաշյանը:

Ազորդացփոր գավառը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով՝ եկեղեցիներով, բերդերով և ամրոցներով: Գրեթե բոլոր բարձր ժայռերի անմատույց գագաթները որպէս բնական ամրություններ էին ծառայում: Նրանց վրա կառուցված բերդերը և ամրոցները թեպէտ աչքի չէին ընկնում մեծությամբ, սակայն իրենց դիրքի շնորհիվ հենարան էին դարձել թշնամիների դեմ պայքարում⁵: Գավառի հուշարձանների տեղագրության և արդի վիճակին է նվիրված սույն հետազոտությունը:

Թորթում գետի աջ ափի պատմաճարտարապետական հուշարձանները

Ազորդացփոր գավառը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի՝ արևելյան և արևմտյան, իսկ գավառի երկու հատվածների բաժանարար գիծ կարելի է ընդունել Թորթում գետը և Թորթումի լիճը, որոնք հստակ ձգվում են հարավից հյուսիս ուղղությամբ: Այսպիսով, Թորթում գետի աջափնյա հատվածում են գտնվում դեռևս միջնադարից հայտնի ներքոհիշյալ բնակավայրերը՝ *Օսխա, Խաթդա, Թն, Բու, Օթդա, Օշկիձոր, Օսեթ, Ազորդ և Ապոնես*:

Օլթի գետից ոչ հեռու գտնվում էր Օսխա գյուղը (այժմ՝ Arpacık): Գյուղի միջնադարյան եկեղեցին գտնվում էր բնակավայրից մոտ 1,5 կմ հարավ, սակայն հիմնահա-

² Բադալյան Գ. -2016, էջ XVI:

³ Ալիշան Ղ. -1856, էջ 38:

⁴ Տաշեան Հ. -1972, հ. 7-9, էջեր 292-293:

⁵ Ерицов А. -1884-1885, т. 8, с. 78.

տակ ավերվել է ճանապարհաշինության ժամանակ, և այժմ կարելի է տեսնել միայն եկեղեցու հետքերը⁶:

Թորթումի ջրվեժի հարևանությամբ էր գտնվում Թն գյուղը (այժմ՝ Çağlayan): Գյուղից 2 կմ արևելք պահպանվում են սկզբնաղբյուրներում չհանդիպող եկեղեցու մնացորդները: Եկեղեցին կառուցված էր կոպտատաշ քարով և կրաշաղախով: Տեսանելի է եկեղեցու հատակագիծը: Պահպանվել են խորանի կլոր հատվածը և հյուսիսարևմտյան անկյունը⁷: Գյուղից 500 մ հյուսիս-արևմուտք՝ Թորթում գետի աջ ափին՝ ժայռոտ բլրի վրա, պահպանվում են բերդի առանձին հատվածներ: Բերդն ուներ քառակուսի հատակագիծ՝ 11x11 մ⁸: Պահպանված պատերի առավելագույն բարձրությունը 7 մ է, իսկ հաստությունը՝ 1,8 մ⁹:

Թորթումի լճից մոտ 2,5 կմ հարավ էր գտնվում Իս գյուղը (այժմ՝ Altınçanak): Գյուղի հյուսիսային մասում՝ տներից մեկին կից, պահպանվում է գյուղի միջնադարյան եռախորան կենտրոնագմբեթ եկեղեցին: Կիսամշակ քարով և կրաբետոնով կառուցված եկեղեցին, ըստ է. Թադալյալիլու, պետք է որ կառուցված լիներ ոչ ուշ քան IX դարում¹⁰: Եկեղեցու հյուսիսային մասը վնասված է: Մնացած հատվածները տեղացիներն օգտագործում են տարբեր նպատակներով: Տարեցները հիշում են նաև, որ «տեսել են նաև եկեղեցու գմբեթը»¹¹:

Իսի եռախորան կենտրոնագմբեթ եկեղեցին կարևոր դեր է խաղում Տայք և Գուգարքի IX-XI դդ. հայկական ճարտարապետության դպրոցի կայացման հարցում: Նույն տիպով են կառուցված հանրահայտ Օշկվանքի գլխավոր տաճարը Տայքում, իսկ Գուգարքում՝ Զաքի եկեղեցին ու մի փոքր փոփոխված Կումբուրդոյի տաճարը: Մակայն Իսի հատակագծային հորինվածքը սերում է վաղբրիստոնեական հայկական ճարտարապետության ավանդույթներից, ինչպես օրինակ հնեվանքի VII եկեղեցուց:

Իսից մոտ 4 կմ դեպի արևելք Օթդա գյուղն էր (այժմ՝ Kirazlı): Օթդայում դեռևս XIX դարում կանգուն էր տաճարը, որը, ըստ Ատրպետի, ի սկզբանե հեթանոսական մեհյան էր և «հեթանոսականից փոխադրած է քրիստոնեականի»¹²: Ցավոք, այսօր տաճարը հիմնահատակ ավերված է:

Իսից մոտ 5 կմ հարավ էր միջնադարյան բազմաթիվ հուշարձաններով հայտնի Օշկիձոր (Էշկիձոր) գյուղը (այժմ՝ Sapaca): Գյուղի ծայրամասում՝ բլրի վրա պահպանվում է միջնադարյան ամրոցը՝ 2 աշտարակներով¹³: Պատերի բարձրությունը հասնում է

⁶ Երևան-Մոսկովի ճանապարհի 2016 թվականի ճանաչման աշխատանքներ, տ. Խուսիշվիլ, Զ. Գոհալիշվիլ, Գ. Իմեդաշվիլ, Մ. Կոլաշվիլ, Դ. Զախարով, Լ. Միլոշևիլ, Կ. Կապանցյան, Երևան, 2017, թ. 58.

⁷ Երևան-Մոսկովի ճանաչման աշխատանքներ, թ. 108.

⁸ Երևան-Մոսկովի ճանաչման աշխատանքներ: Իստորիա և քաղաքային ճանաչման աշխատանքներ, Երևան, 2017, թ. 252.

⁹ Երևան-Մոսկովի ճանաչման աշխատանքներ, թ. 109.

¹⁰ Такайшвили Э. -1952. с. 80.

¹¹ Երևան-Մոսկովի ճանաչման աշխատանքներ, թ. 119.

¹² Արաբյան -1929, էջ 156:

¹³ Երևան-Մոսկովի ճանաչման աշխատանքներ: Իստորիա և քաղաքային ճանաչման աշխատանքներ, թ. 266.

10 մետրի: Գյուղում պահպանվում են նաև զմբեթավոր դահլիճ տիպի եկեղեցու ավերակները: Եկեղեցին պատված է եղել սրբատաշ քարերով, որոնցից մի քանիսն են պահպանվել: Խորանին, ինչպես նաև եկեղեցու արևմտյան և հյուսիսային պատերին նշմարվում են որմնանկարների հետքեր: Գյուղի տարածքում՝ այգիներից մեկի մեջ, պահպանվում են մեկ այլ՝ կոպտատաշ քարերով և կրաբետոնով կառուցված սրահավոր եկեղեցու մնացորդներ: Պահպանված հատվածում պատերի առավելագույն բարձրությունը հասնում է 4 մետրի¹⁴:

Ագորդացիոր գավառի վարչական կենտրոնը Ագորդ բնակավայրն էր (այժմ՝ Uzundere), որը XIX դարի երկրորդ կեսի դրությամբ վեր էր ածվել ոչ մեծ մի գյուղի¹⁵: Այստեղ՝ Շաշարոզ թաղամասում, պահպանվում է սրահավոր եկեղեցի, որը վերջերս վերականգնվել է: Պատերը ամրացված են և ծածկված բազալտե քարով, իսկ ներսից սպիտակեցված է: Եկեղեցու մուտքը արևմուտքից է, ներքին որմերը ծածկված են եղել որմնանկարներով, որոնց մնացորդները պահպանվել են միայն հարավարևմտյան անկյունում: Մուտքի բարավորին փորագրված են արձանագրություններ¹⁶: Ագորդի Մովսես թաղամասում՝ փոքրիկ ժայռի վրա, կա նաև մեկ այլ եկեղեցի, որից պահպանվել են միայն հյուսիսային պատը և խորանի մի մասը¹⁷:

Օսեթ գյուղը գտնվում էր Ագորդի անմիջական հարևանությամբ: Այսօր այն Ուզունդերեի էրիկլի թաղամասն է: Գյուղի գերեզմանատանը պահպանվում են միանավ սրահավոր եկեղեցու մնացորդները, պահպանվել են խորանը և հյուսիսային պատի մի մասը: Կառուցված է կոպտատաշ քարերով և կրաշաղախով¹⁸:

Ագորդացիոր գավառի հարավային մասում՝ Թորթում գետի աջ ափին էր Ապոնես գյուղը (այժմ՝ Suyatağı): Ապոնեսում 1878 թ. դրությամբ ապրում էին 280 հայեր, գյուղն ուներ իր վարժարանը և եկեղեցին¹⁹: Վերջինս կառուցված էր բարձրադիր վայրում: Այսօր պահպանվում են եկեղեցու և կից կառույցների մնացորդները: Եկեղեցին կառուցված է եղել միջին չափսերի կոպտատաշ քարերով և կրաբետոնով՝ հատուկ հարթեցված վայրում: Ջորի կողմում այն հենված է հատուկ կառուցված պատվանդանի վրա: Եկեղեցին շրջապատված էր պարիսպով, որը հիմնականում պահպանվում է և վնասված է միայն որոշ հատվածներում²⁰: Պահպանված հատվածների ամբողջականությունը թույլ է տալիս մեզ ենթադրել, որ այստեղ միջնադարում գոյություն է ունեցել վանական համալիր:

Թորթում գետի ձախ ափի պատմաճարտարապետական հուշարձանները

¹⁴ Ե. Կարաջյան, Երևան, 2016 թ. հունիսի 15, համար 1, 120-123.

¹⁵ Ե. Կարաջյան, 2007, էջ 51:

¹⁶ Ե. Կարաջյան, 2016 թ. հունիսի 15, համար 1, 128.

¹⁷ Ե. Կարաջյան, 2016 թ. հունիսի 15, համար 1, 129.

¹⁸ Ե. Կարաջյան, 2016 թ. հունիսի 15, համար 1, 117.

¹⁹ Ա. Կարաջյան, 2018, էջ 104:

²⁰ Ե. Կարաջյան, 2016 թ. հունիսի 15, համար 1, 196.

Ազորագրված գավառի արևմտյան մասում՝ Թորթում գետի ձախափնյա հատվածում են գտնվում ներքոհիշյալ բնակավայրերը՝ *Ասպարաշեն (Աշմիշեն), Լեք, Խարս, Օխիկ, Օշկ, Վանք, Ճալա, Ընկուզեք, Վիսիկ և Խախու*:

Գավառի հյուսիսում՝ Օլթի և Թորթում գետերի միախառնման վայրից ոչ հեռու էր գտնվում դեռևս միջնադարյան շրջանից հայտնի Ասպարաշենը (այժմ՝ Kınalıçam): Գյուղի բակերից մեկում մինչև 1970-ական թթ. պահպանվում էր եկեղեցին, սակայն տեղացիները քանդում են այն, իսկ եկեղեցու քարերով իրենց համար տներ կառուցում: Ի տարբերություն եկեղեցու՝ բավականին պահպանված է բերդը: Այն գտնվում է գյուղի հյուսիսային հատվածում՝ ներկայիս Թորթում-Յուսուֆեյի ճանապարհի կողքին²¹: Միջնադարում բերդը կառուցված էր այնպես, որ կարծես այն նայում է մի քանի կմ հյուսիս-արևելք գտնվող պատմական Տայքի ճակք գավառի Իշխանաց բերդին:

Ազորագրված գավառի Խարս²² գյուղի (այժմ՝ Ulubağ) «Վերին թաղի» այգիներում պահպանվում է բավականին մեծ սրահավոր եկեղեցի՝ հարավային կցակառույցով: Եկեղեցու արևմտյան պատը քանդված է, մնացած պատերը թեպետ վնասված են, սակայն հիմնականում պահպանվել են: Պատերի առավելագույն բարձրությունը 4 մետր է: Հարավային կցակառույցը խորանով է: Եկեղեցին կառուցված է կոպտատաշ քարով և կրաբետոնով: Տեղացիները եկեղեցու գտնվելու վայրն անվանում են «Քիլիսե Բաղլար» («Եկեղեցու այգիներ»)²³:

Թորթումի լճի ափին էր Օխիկ գյուղը (այժմ՝ Balıklı): Ի սկզբանե գյուղը գտնվում էր Թորթում գետի ափին, սակայն 1791 թ. երկրաշարժի հետևանքով, երբ փակվեց գետի հունը, բնակիչները հաստատվեցին իրենց ամառանոցում²⁴: Գյուղն ուներ երկու եկեղեցի, որոնցից առաջինը գտնվում է ներկայիս Դեղիրմենթեփե թաղում: Պահպանվել է հյուսիսային պատը, ինչպես նաև արևելյան և արևմտյան պատերի մի մասը: Եկեղեցին կառուցված է կոպտատաշ քարերով և կրաբետոնով: Տեղացիները եկեղեցու գտնվելու վայրը անվանում են «Քիլիսե սիրթ» («Եկեղեցու լեռնաշղթա»), իսկ եկեղեցին՝ «Յուքարը Քիլիսե» («Վերին եկեղեցի»): Գյուղի մեկ այլ եկեղեցի գտնվում է «Ստորին» թաղում: Եկեղեցին զրեթե ամբողջությամբ պահպանվել է, քանդված է միայն տանիքը: Կառույցը բոլոր կողմերից ունի մեկ փոքրիկ պատուհան: Եկեղեցու մուտքն արևմուտքից է: Կառուցված է կոպտատաշ քարերով և կրաբետոնով: Տեղացիները եկեղեցին անվանում են «Աշաղը Քիլիսե» («Ստորին եկեղեցի»)²⁵:

Թորթումի լճից մոտ 8 կմ դեպի արևմուտք Օշկ (Աշունք, այսօր՝ Gölbasi)²⁶ գյուղն էր, որի հարևանությամբ էր Օշկվանք կամ ուղղակի Վանք գյուղը (այսօր՝ Çamlıyamaç): Գյուղը նշանավոր է X դարի երկրորդ կեսին կառուցված նշանավոր վանքով: Վանքի

²¹ Կառ-Վարձյան: Իստորիսա և քուլտուրիս Ժեղլեբիս քաթալոգի, ԶԶ.ԶԶ. 60, 241.

²² 1791 թ. Տայքում տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ Խարս գյուղի հարևանությամբ գտնվող նույնանուն լեռան վրայից մի խոշոր ժայռ է պոկվել, որը, գլորվելով ցած, փակել է Թորթում գետի ճանապարհը, ինչի արդյունքում առաջացել են Թորթումի լիճը և 48 մ բարձրությամբ ջրվեժը:

²³ Կառ-Վարձյան Ժեղլեբիս 2016 Վ.լոսի Տաքվեբի Եթսթեդիցիբիս ճնգարիթեբի, ԶԶ. 111.

²⁴ «Շիրակ» -1905, 5, էջ 377:

²⁵ Կառ-Վարձյան Ժեղլեբիս 2016 Վ.լոսի Տաքվեբի Եթսթեդիցիբիս ճնգարիթեբի, ԶԶ.ԶԶ. 110-111.

²⁶ Աշունք տարբերակով գյուղը հանդիպում է Վարդան Արևելցու մոտ: (Տե՛ս *Հաւարումն...-1862*, էջ 85):

О РАСПОЛОЖЕНИИ И СОВРЕМЕННОМ СОСТОЯНИИ ИСТОРИЧЕСКИХ И АРХИТЕКТУРНЫХ ПАМЯТНИКОВ ПРОВИНЦИИ АЗОРДАЦПОР

Акопов А. А., Наатакян Д. С.

Ключевые слова: *Тайк, Тортум, Чорох, Азорд, памятник, Ошк, церковь, крепость, замок, поселение, армяне.*

В результате исследования была уточнена топография основных историко-архитектурных памятников провинции Азордацпор исторической области Тайк Великой Армении. Многие исторические памятники, сохранившиеся на территории провинции Азордацпор – церкви и монастыри, крепости и замки – засвидетельствованы в раннесредневековых источниках и являются частью армянского историко-культурного наследия. К сожалению, многие памятники провинции не сохранились из-за варварского отношения нынешнего населения провинции и их предков.

ON THE LOCATION AND CURRENT CONDITION OF THE HISTORICAL AND ARCHITECTURAL MONUMENTS OF AZORDATSPOR PROVINCE

Akopov A. A., Nahatakyan D. S.

Key words: *Tayk, Tortum, Chorokh, Azord, monument, Oshk, church, fortress, castle, settlement, Armenians.*

As a result of the study, the topography of the main historical and architectural monuments of the Azordatspor province of the Tayk - historical region of Greater Armenia was clarified. Many historical monuments preserved in the Azordatspor province - churches and monasteries, fortresses and castles - are attested in early medieval sources and are part of the Armenian historical and cultural heritage. Unfortunately, many monuments of the province have not been preserved due to the barbaric attitude of the current population of the province and their ancestors.

Գ ր ա կ ա ն ու թ յ ո ն

1. Ալիշան Դ.-1856, Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ:
2. Ակոպով Ա. 2018, Թորթումի գավառի հայ բնակչությունը 1830-1878 թթ., ԳԱԱ ԳՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 21, Գյումրի, էջ 96-106:
3. Ատրպետ -1929, Ճորտիսի ավազանը, Վիեննա:
4. Բադալյան Գ.-2018, Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրեին, ՎԷՄ համահայկական հանդես, Ը (ԺԴ) տարի, թիվ 1 (53) հունվար-մարտ, հավելված:
5. Էփրիկյան Ս. -1907, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. Բ, Վենետիկ:
6. Հաւարքումն պատմութեան Վարդանայ վարդապետի 1862, Վենետիկ:
7. Յակովբ Կարնեցի -1903, Տեղագիր Վերին Հայոց, յիշատակարան ԺԷ դարու, Վաղարշապատ, Ս. Էջմիածնի տպ.:

- Ընդունվել է՝ 30. 01. 2022
Գրախոսվել է՝ 18. 03. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Դավիթ ՆՎՀԱՏԱԿՅԱՆ, ճարտարապետության թեկնածու,
ԾՀՀՀ՝ ճարտարապետության տեսության, պատմամանրապատկերական
ժառանգության վերականգնման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի
ապիստեղծ, ՀՀ ԳԱՄ Շիրակի հայապատկան հետազոտությունների
կենտրոնի գիտաշխատող, էլ. հասցի՝ davit.nahatakan@gmail.com